ՄԵՐԻ ԳԱՆԻԵԼՅԱՆ

ԿԱՌՈՒՅԵԼ...

Զմեռային արեւոտ առավոտ է, օդը սառն է, թափանցիկ:

Լսվում են Մայր Տաճարից եկող՝ առավոտյան ժամերգությունը ազդարարող զանգի ղողանջները, որոնք կարծես գնում են միավորվելու հարեւան Ս. Գայանե վանքից լսվող ղողանջներին: Շրջապատը լցված է խաղաղությամբ եւ անդորրով: Այգու ծառերի չոր ճյուղերի եզերից դանդաղ դեպի երկնակամար է բարձրանում կարմիրին տվող արեւը: Նայում եմ շուրջս տարածվող Մայրավանքի հին ու նոր կառույցներին, բարեկարգված տարածքներին, ակամայից մտաբերում դրանց տեսքը քիչ վաղ անցյալում եւ համեմատում, թե ինչպես են դրանք փոփոխվել, բարեզարդվել ու համալրվել նոր կառույցներով: Շատ ժամանակ չի անցել, բայց որքան աշխատանք է կատարվել. հնարավո՞ր է մեկ փուլով նկարագրել կատարված հսկայածավալ աշխատանքը եւ դրա հետ կապված բազմապիսի դժվարություններն ու խոչընդոտները:

Հիշողությանս մեջ դեռ թարմ է Վազգեն Ա. Հայրապետի օրոք կառուցված «Վազգենյան մուտքը», որը նախկինում Տպարանի շենքի հարեւանությամբ էր գտնվում եւ արեւելքից ընդգծում էր Մայրավանքի հիմնական սահմանը: Այս սահմանից դուրս էին մնացել վանքապատկան բազմաթիվ շինություններ այդ թվում՝ ներկայիս Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, վանքի սեղանատունը, բուժարանը, սինոդի շենքերը եւ բազմաթիվ այլ կառույցներ եւ տարածքներ:

Համայնավարության տարիներին իշխանություններն էին որոշում Մայրավանքի տարածքների սահմանները եւ նրան պատկանող կառույցները: Մայրավանքի տարածքներն այդ տարիներին ոչ միայն կրճատվել եւ սահմանափակվել էին, այլեւ փոխվել էր շինություններից շատերի ֆունկցիոնալ նշանակությունը: Կառույցները արեւմուտքում եւ հարավում «գրավված» տարածքների վրա վեր էին ածվել զորամասի շինությունների, ոչնչացվել էր Ներսիսյան արհեստական լիճը՝ ինժեներական մի կառույց, որի միջոցով իջեցվում էր Մայրավանքի տարածքի գրունտային ջրերի մակարդակը: Սա միայն Մայրավանքի տարածքում, իսկ որքան վանքեր, եկեղեցիներ խորհրդային իշխանության որոշումներով դադարեցին գործելուց, հանձնվեցին պետական խնամակալությանը. դրանցից շատերը մինչ այժմ մատնված են անտերության եւ անուշադրության... Կառույցներ, որոնք զրկվեցին իրենց ֆունկցիոնալ իմաստից, դարձան պատմության եւ մշակույթի «հուշարձաններ»: Անցած երկարամյա պատերազմների, համայնավարության 70 տարիների, «մշակութային կոտորածների» պատճառով դրանցից շատերը կանգնեցին կործանման եզրին:

Խորհրդային տարիներից սկսած Հայ Առաքելական Եկեղեցու ունեցվածքն այդ կարգավիճակով գոյատևեց մինչև 1999 թ.:

Իսկ խորհրդային կարգերի փլուզմանը հաջորդեցին մութ ու ցուրտ տարիները, տնտեսական ծանր պայմանները, գործազրկությունը:

Ինչից սկսել...

Այս հարցն էր, որ իր առջև դրեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1999 թ.:

«Կառուցել, արարել, միավորել... բարեզարդել հայրենի դարավոր սրբավայրերը և կառուցել նորերը...»:

Ցանկություն՝ համապատասխան հնարավորությունների, մեղվաջան աշխատասիրության, ծավալուն և հետևողական գործունեության հետ, շարժիչ ուժեր, որոնք մշակույթը մղում են կատարելության՝ ակնհայտորեն կանխորոշելով դրա զարգացման ուղեգիծը: Ոչ բոլորն են օժտված նման հատկանիշներով:

Նա, ով օժտված է, կառուցեց...

Հայ եկեղեցական ճարտարապետությունը ոսկե հետք է թողել համաշխարհային մշակութային ժառանգության մեջ՝ ճարտարապետական ոճերի շարքին ավելացնելով նոր խոսք՝ «Հայկական ճարտարապետական արվեստ»: Հին ավանդույթները շարունակելու, մշակույթի և հոգևոր գաղափարախոսության մեջ նոր դարագլուխ, ուղեգիծ բացելու համար անհրաժեշտ էր կառուցել, միայն այդպես էր հնարավոր շարունակել առաջընթացը և մասնավորապես զարգացնել ճարտարապետական մշակույթը:

Կառուցվեց...

Իմ ասելիքից դուրս է Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հոգևոր գաղափարախոսության մեջ ունեցած, Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր խնդիրներին առնչվող հաջողություններին ու առաջընթացին անդրադառնալը:

Ներկայացնում եմ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնարկած ծավալուն շինարարական գործունեությունը, որի շնորհիվ բարեփոխվեց հոգևոր համակարգը, տնտեսական և աշխատանքային բարելավված պայմաններ, և աշխատատեղեր ստեղծվեցին հոգևոր և աշխարհիկ դասի համար, ապահովվեց Հայ Եկեղեցու առաջընթացը, նոր խոսք ասվեց հայ ճարտարապետության և կառուցողական արվեստի մեջ: Սակայն ձեռնարկված մեծածավալ և բազմակողմանի բոլոր ծրագրերն իրականություն են դառնում բազմաթիվ դժվարություններ և բարդություններ հաղթահարելով:

Հակառակ, որ կա Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին վերադարձնել իր ունեցվածքը, այնուամենայնիվ, մինչ օրս այդ խնդիրը վերջնականապես լուծված չէ: Չնայած այդ ամենին՝ պետք էր սկսել գործել... Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն իր շինարարական գործունեությունը սկսեց Մայրավանքի պատմական միջավայրի վերականգնումից. Մայրավանքն այդ տարիներին ճանաչվել էր որպես համաշխարհային մշակութային արժեք, իսկ մշակութային նման արժեքները պետք է պահպանվեն իրենց պատմական միջավայրով, այսինքն՝

փարածքներով եւ պատմական կառույցներով: Պատմական միջավայրը վերականգնել նշանակում էր սկսել պատմական փարածքներից եւ դրանք վերադարձնելուց: Իհարկե, դրանք վերադարձվեցին մաս-մաս, ոչ ամբողջությամբ, սակայն հետեւողական աշխատանքն ակնկալում է արդյունք: Մայր Աթոռին վերադարձվեց վանքի արեւելքում ցայսօր անփերության մատնված՝ Մայրավանքի նախկին փարածքը՝ Գեւորգյան ճեմարանի, միաբանական սեղանատան հետ միասին: Սկսվեցին այդ հատվածի փարածքի ցանկապատման աշխատանքները: Այդ իսկ պատճառով Վազգենյան մուտքը (կառուցվել էր Վազգեն Ա. Կաթողիկոսի օրոք, հեղինակ՝ Ա. Գալիկյան) քանդվեց եւ վերահավաքվեց վանքապատկան փարածքի հյուսիսային մասում՝ տեղադրվելով Ս. Գայանե վանական համալիր փանող ճանապարհի առանցքով, բացելով Գայանե վանքի հարավային ճակատի տեսապատկերը Արարատ լեռան հետ: Միաժամանակ հնարավորություն ստեղծվեց միասնական փարածքի մեջ ընկալելու երկու վանք՝ Մայրավանքը եւ Ս. Գայանեն:

Այսպիսով, Մայրավանքի համար ձեւավորվեց հյուսիսային մուտքը, որն անմիջական կապ ստեղծեց Էջմիածին քաղաքի գլխավոր հրապարակի հետ՝ ձեւավորելով նաեւ հրապարակի հարավային ճակատը: Որոշումը հաջողված էր, սակայն Վեհափառ Հայրապետը ջանք չէր խնայում Մայրավանքին վերադարձնելու իր նախկին վանքային կարգավիճակը՝ պահպանելով նաեւ Մայրավանքի բազմաթիվ այլ ֆունկցիաները՝ համայն հայության հոգեւոր կենտրոն եւ կաթողիկոսական նստավայր: Այս ամենի հետ մեկտեղ պետք էր հայության համար հնարավորություն ստեղծել նշելու քրիստոնեության ընդունման 1700-ամյակի մոտալուտ տոնը, Հայ Եկեղեցու փաղավար տոները, մեռոնի օրհնությունը, պետական տոնակատարությունները, եւ քանի որ Մայր Տաճարի հնարավորությունները այդ առումով սահմանափակ էին, Վեհափառ Հայրապետը ճարտարապետների առջեւ խնդիր դրեց ձեւավորելու վանքի արեւելյան մուտքը: Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդում մինչ այդ սկսել էր տոնակատարությունների համար նախատեսված Բաց խորանի էսքիզ-առաջարկի քննարկման աշխատանքները:

Խնդիրները այդ փարիներին բազմաթիվ էին եւ բազմաբնույթ, պահանջում էին կազմակերպչական, ադմինիստրատիվ, հոգեւոր, ճարտարապետական, շինարարական մեծաքանակ խնդիրների լուծում: Անհրաժեշտ էր ավարտին հասցնել դեռեւս Վազգեն Ա.-ի օրոք սկսված եւ Գարեգին Ա.-ի օրոք շարունակվող, հիմնական մասով անավարտ թողնված՝ Երեւան քաղաքում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված եկեղեցու շինարարական աշխատանքները:

Ճարտարապետական եւ շինարարական բազմաթիվ խնդիրների լուծման համար անհրաժեշտ էր ունենալ մասնագետների խումբ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստեղծվեց եւ ձեւավորվեց ճարտարապետաշինարարական նոր բաժին, որը պետք է զբաղվեր ճարտարապետական ու շինարարական բոլոր ծրագրերով: Մասնագետներին նաեւ պետք էր գինել ժամանակակից համակարգչային, տպագրական սարքերով եւ տեխնիկայով, որը նույնպես իրականացվեց:

Ճարտարապետները, կառուցողական իրենց ունակությունները զուգորդելով պատվիրատուի ցանկությունների հետ, սկիզբն են դնում ստեղծագործության... Կառույց,

Մայր Տաճար



Մայրավանքի տարածքը արեւելքից

Մայրավանքի տարածքը արեւմուտքից

Տնտեսական կառույց

մշակույթ, մի քանի արհեստների եւ արվեստների սինթեզ, որը հանձնվում է ժամանակի դատին: Կդառնա՞ այն մշակութային ժառանգություն՝ որոշում է ժամանակը: Իսկ ժամանակը երբեմն անողոք է քննադատություններով... Քննադատություններ, որոնք արժանի են ուսկնդրության:

Եկեղեցաշինության մշակույթը, խորհրդային տարիներին ընդհատված լինելով, ճարտարապետներին զրկել էր դրանով զբաղվելու եւ արարելու հնարավորությունից, որը հանգեցրել էր նաեւ հոգեւոր գաղափարախոսությունով ծնված մշակույթային տեղեկատվության կորստի: Այդ խնդիրների ներկայացումն անհրաժեշտ եւ պարտադիր պահանջ է, քանի որ այդ դաշտում մինչ այժմ կա վակում:

Ովքե՞ր են եղել մեր հոգեւոր մշակութային ժառանգությունը կերտողները. առաջին հերթին հոգեւորականները, որոնք հասկացել, հավատացել են Եկեղեցու խորհուրդներին եւ դրանց անմիջական կրողներն են եղել:

Իսկ ԻԱ. դարում եկեղեցի նախագծող ճարտարապետները աթեիստներ էին, որոնց համար եկեղեցին լոկ կառույց էր: Արդյոք հնարավո՞ր է եկեղեցի նախագծել առանց հավատի՝ չիմանալով նրա գաղափարախոսությունը... իհարկե ո՛չ: Միայն հատակագծերը եւ ճարտարապետական կերպարներն ընդօրինակելը լոկ ավանդական ճարտարապետական սկզբունքներին հետեւել է, որը հեռու է ճարտարապետական կոթող կոչվելու գաղափարից, չունի ձեւավորված հոգեւոր միջավայր, որը շունչ կհաղորդի կառույցին:

Հոգեւոր գաղափարախոսության բացակայությունը, եկեղեցաշինության հիմնավոր խնդիրներին՝ խորհուրդներին, ճարտարապետական ձեւերի սիմվոլիկային չտիրապետելը, որոնցով ստեղծված էին հոգեւոր կառույցների բազմաթիվ տիպեր, հանգեցնում են կերպարի մեխանիկական ընդօրինակմանը: Իսկ ժամանակաշրջանը դաստիարակել եւ տվել էր միայն նման ճարտարապետ-մասնագետներ՝ ստեղծագործելու եկեղեցաշինության բնագավառում: Ուստի, ժամանակաշրջանի եկեղեցաշինության ճարտարապետության մասին քննադատորեն խոսելիս կամ ներկայացնելիս, պետք է հաշվի առնել վերոգրյալը, քանի որ այդ մասնագետները այժմ պետք է «նորը» կերտեին եւ նոր խոսք ասեին՝ իրենց առջեւ չունենալով եկեղեցաշինության անցումային մի ողջ շրջան:

2001 թ. Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարությանը պատրաստվելու, բազմաթիվ այլ նախաձեռնություններ իրականացնելու համար ժամանակը սահմանափակ էր՝ ընդամենը մեկ տարի:

Մայրավանքում իրագործվող աշխատանքների շարունակությունը եղավ Արեւելյան մուտքի եւ նրան կից Բաց խորանի կառուցումը, վերջինս բազմության համար եկեղեցական ծեսերի կատարմանը պետք է ծառայեր: Նախագծի իրագործումը հանձնարարված էր վաստակաշատ ճարտարապետների (Ջիմ Թորոսյան, Ռոմեն Ջուլհակյան): Նախագծի էքիզային փուլը մի քանի անգամ քննարկվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական խորհրդում: Խորհրդի քննակումներին մասնակցում էր նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետ-ճարտարապետ Միշել Մորը, քանի որ Մայր Տաճարն ընդգրկվել էր համաշխարհային մշակութային արժեքների ցանկում:

Հիմնական վիճահարույց խնդիրը վերաբերում էր Մայրավանքի տարածքում Բաց

խորանի տեղադրմանը: Ճարտարապետ հեղինակները առաջարկում եւ պնդում էին այն տեղադրել Մայր Տաճարի հարեւանությամբ, հյուսիսային կողմում, ուր այժմ կանգնած է Մեծ Եղեռնի զոհերին նվիրված կոթողը: Խնդրին վերջնականապես հիմնավորված լուծում տալու համար Վեհափառ Հայրապետն առաջարկեց հարցը քննարկել ներկայացված տեղում: Խորհրդի անդամներից շատերը հիմնավորում էին տեղի ոչ ճիշտ ընտրությունը՝ մատնացույց անելով պատմական մեծ արժեք ներկայացնող Մայր Տաճարը, եւ որ նման լուծմամբ կարող է ոչնչացվել պատմական միջավայրը, սակայն ճարտարապետների համար այդ ամենը համոզիչ չէր հնչում: Ընդդիմախոսների թվում էր նաեւ Միշել Մորը, որը առաջարկում էր. «Եթե ճարտարապետները պնդում են իրենց առաջարկը, ապա այն ինչ կառուցվելու է տվյալ տեղում, ժամանակավոր կառույց պետք է լինի»:

Վեհափառ Հայրապետը մեծ պատասխանատվությամբ էր մոտենում խնդրին: Լսելով մասնագետների կարծիքը՝ կայացրեց քաղաքաշինական եւ ճարտարապետական ամենահոհեմ որոշումը՝ Մայր Տաճարի առանցքով դեպի արեւելք տեղափոխել Արեւելյան մուտքի կառուցումը եւ նրա հարեւանությամբ տեղադրել Բաց խորանը: Խնդրի լուծման նման տարբերակ անգամ մասնագետների մոտ չէր առաջացել, սակայն նրանք եւս զգան, որ հարցի ամենաճիշտ լուծումը Վեհափառ Հայրապետի առաջարկածն է:

Բազմաթիվ քննարկումներից հետո Մայր Տաճարի արեւելք-արեւմուտք առանցքով, ցանկապատի շարունակության մասում, կից տեղադրվեց նաեւ վանքի համար այնքան կարեւոր Արեւելյան՝ Գրիգոր Լուսավորչի դուռը, որը խորհրդանշում է Տրդատ թագավորի եւ Գրիգոր Լուսավորչի մուտքը դեպի քրիստոնեական հավատք: Համալիրը կառուցվեց մոխրագույն արթիկ տուֆ քարով: Բաց խորանը կրկնում է Սուրբ խորանը, միայն արտաքին սրահը բաց է: Խորանի արտաքին արեւելյան պատն իրականացված է միմյանց զուգահեռ, քիչ ընդգծված որմնապատերով: Գրիգոր Լուսավորչի դուռը ստորին մասում չորս սյուների (Թադեոս եւ Բարդուղիմեոս, Տրդատ թագավոր եւ Գրիգոր Լուսավորիչ) վրա բարձրացող, աշխարհի չորս կողմերի վրա ընդգծված կամարներով միավորված մի կառույց է, դուռ, որի միջով անցնող ճանապարհը տանում է դեպի Տաճար: Այն խորհրդանշական կոթող է՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: 1700-ամյա Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնակատարությունը նշելու համար անհրաժեշտ էր նաեւ վերականգնել Մայր Տաճարի տանիքածածկերը (նախագծի հեղինակներ՝ Մերի Դանիելյան, Ռազմիկ Դավթյան): Այս խնդիրը քննարկվեց ինչպես Մայր Աթոռի ճարտարապետական, այնպես եւ ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհուրդներում: Մասնագետների՝ Վեհափառ Հայրապետի կողմից կազմված խորհուրդը, մինչ խնդրի լուծումը, կատարեց հետազոտական մի շարք աշխատանքներ:

1960-ական թվականներին իրականացված նորոգումների ժամանակ Մայր Տաճարի քարե տանիքածածկը անջրաթափանց դարձնելու համար տանիքների վրա (բացառությամբ վեղարի) փռվել էին կապարե թիթեղներ: Վեհափառ Հայրապետի անմիջական հանձնարարականով, ՀՀ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության համապատասխան մասնագետների մասնակցությամբ մշակված ծրագրով կատարվեցին ուսումնասիրություններ: Տանիքի մի քանի հատվածներում

բարձրացվեց կապարե թաղանթը եւ ուսումնասիրվեցին պահպանված քարե փանիքածածկի վիճակը, օգտագործված շաղախի բաղադրությունը: Կապարե թիթեղների տակ քարե ծածկույթը լիցքի հետ միասին հողմահարվել եւ վերածվել էր հողի: Պարզվեց, որ փանիքում տեղադրված կապարե թիթեղներն ունեին բավական մեծ ճաքեր, որտեղից մթնոլորտային ջրերը թափանցում էին Տաճարի թաղերի մեջ եւ թրջում դրանք: Կապարե ծածկույթի պատճառով ցուրտ եղանակներին Տաճարի ներսի տաք օդը թաղերի վրա վեր էր ածվում կոնդենսատի, թրջում առասպաղները եւ որմնանկարները: Տաճարի պատերը գրունտային ջրերի մակարդակի բարձրության պատճառով մինչեւ 4.5 մ բարձրության վրա թրջվում էին: Ուստի, Վեհափառ Հայրապետի հանձնարարականով իրականացվեցին տարածքի գրունտային ջրերի ուսումնասիրման աշխատանքներ: Կատարվեց գրունտային ջրերի մակարդակի եւ Մայր Տաճարի վրա դրանց թողած ազդեցության ուսումնասիրություն:

Մայր Տաճարի որմնանկարների վիճակը եւս ուսումնասիրվեց. դրանց կեղտոտվածության (մրոտվածության) խնդիրների վերաբերյալ կազմվեցին համապատասխան ծրագրեր: Խնդիրները եւ դրանց լուծումները ներկայացվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական եւ ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհուրդներին, որոշվեց՝ քանդել հեռացնել 1960-ականներին իրականացված կապարե փանիքածածկույթը եւ ավանդական քարե ծածկասալերով վերականգնել արդեն հողմահարված եւ քայքայված քարե փանիքածածկերը:

Վերջնական որոշումները ընդունվեցին՝ փանիքները վերականգնել ավանդական եղանակով, պատերը եւ որմնանկարները մաքրել մրից:

Մայր Տաճարի լանջավոր փանիքածածկը (բացառությամբ վեղարի եւ զանգաշտարակների) վերականգնվեց ավանդական ելուստավոր ծածկասալերով: Տաճարի որմնանկարները մաքրվեցին մրից եւ վերականգնվեցին, ներքին պատերը հարդարվեցին: Մոտենում էին Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված տոնակատարությունները եւ ավարտին պետք է հասցվեր Երեւանի Գրիգոր Լուսավորիչ տաճարի կառուցման շինարարական աշխատանքները:

Գրիգոր Լուսավորիչ տաճարի կառուցումն ավարտին հասցվեց, խաչն օրհնվեց. նախագիծը (հեղինակ՝ ճարտարապետ Ս. Քյուրքչյան) հաստատվել էր դեռեւս Վազգեն Ա. Կաթողիկոսի օրոք: Հիմնային մասերն իրականացվել էին Գարեգին Ա. Հայրապետի օրոք, իսկ շինարարական ողջ աշխատանքը տարածքի բարեկարգման հետ միասին կատարվեցին Գարեգին Բ. Կաթողիկոսի անմիջական ղեկավարությամբ:

Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի բազմազան տոնակատարությունների եւ միջոցառումների շարքում նախատեսվում էր նաեւ Հռոմի պապի՝ Հովհաննես-Պողոս Բ.-ի այցելությունը Հայաստան: Ճիշտ է՝ տոնակատարությունները նվիրված էին քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, սակայն նաեւ ավելում էին Հայ Առաքելական Եկեղեցու նոր վերածնունդը: Տոնակատարությունները մեծ շուքով նշվեցին, նախատեսված բոլորը ծրագրերն իրականացվեցին: Որից հետո Վեհափառ Հայրապետն սկսեց ծրագրերի եւ նախաձեռնությունների իրականացման մի նոր փուլ:

Մայրավանքի տարածքում բազմաթիվ եւ բազմաբնույթ կառույցներ կան, որոնք համախմբված են Մայր Տաճարի շուրջը: Վերջինս իր շրջակա կառույցներով եւ տարածքներով վերականգնման եւ բարեկարգման կարիք ուներ: Առաջնահերթ էր նաեւ Մայրավանքի տարածքում գոյություն ունեցող եւ կառուցվելիք շինությունների համար իրականացնել տարածքի զոտեւորման նախագիծ, որից եւ Վեհափառ Հայրապետը սկսեց:

Մայրավանքի տարածքը բաժանվեց մի քանի գոտիների՝ ուսումնական, թանգարանային, վարչատնտեսական, Վեհարանի եւ Գիվանատան գոտիներ:

Պահպանվեց մի շարք կառույցների ֆունկցիոնալ նշանակությունը, մյուսներին նոր գործառույթ տրվեց:

Մայրավանքը կաթողիկոսանիստ է եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր կենտրոնն է: Այն, համարվելով վանական կառույց, չուներ անհրաժեշտ քանակի կացարանային շինություններ: Տարածքում գոյություն ունեցող կացարանային շինություններից եւ ոչ մեկը չէր համապատասխանում ժամանակակից պահանջներին: Առաջին վանական համալիրը, որտեղ հոգեւորականների համար կացարանների կառուցումը առաջնահերթ էր՝ Մայրավանքն էր:

Գարեգին Բ. Կաթողիկոսը Մայրավանքի վերականգնումով, փաստորեն, սկիզբ դրեց վանական համալիրների վերականգնմանը, զարգացմանը եւ նորովի օգտագործմանը՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակակից նորմատիվ պահանջներին եւ հոգեւորականների նոր պահանջներին համապատասխան լուծելով քաղաքաշինական եւ վերականգնողական մի շարք խնդիրներ:

Ամենայն Հայոց Հայրապետի որոշմամբ Մայրավանքի հիմնական բակից դուրս, Ղազարապատից դեպի հարավ ընկած ամայի տարածքը հատկացվեց միաբանական կացարաններին:

Նախագծվեց եւ կառուցվեց միաբանական կացարանների նոր շենքը, որն այժմ համապատասխանում է բոլոր պահանջներին: Այն երկհարկանի է, ունի նաեւ նկուղային հարկ: Շենքը կառուցված է տուֆ քարով, ստորին երկու շարքերն իրականացված են բազալտ քարով: Այն բաղկացած է մի քանի մասնաշենքերից: Հատակագծում արտաքին բաց սրահներով, ներսում միջանցքի շուրջ դասավորված հարմարավետ կացարաններ են՝ յուրաքանչյուրը բաղկացած աշխատասենյակից եւ ննջարանից, կոմունալ բոլոր հարմարություններով: Նկուղային մասում տեղավորված է ճաշարանը՝ խոհանոցով եւ տնտեսական այլ կառույցներով: Շենքն արտաքինից համեստ ճարտարապետական կառույց է՝ քիվերի հորիզոնական նուրբ ջլատումներով: Բաց խորքային պատշգամբների եւ պատուհանների ռիթմիկ շարքը միավորում է որմնային հատվածները, դարձնում մեկ միասնական ճակատ, որը դեպի արեւելք-արեւմուտք 90 աստիճանով շրջանցելով՝ ստեղծել են մի պարփակ բակ: Բակի հյուսիսային մասի կառույցը Ղազարապատն է՝ դեպի Մայր Տաճար տանող իր երկու պատմական մուտքերով եւ միաբանական նոր կառույցի հարավային երկու կամարակապ մուտքերով:

Միաբանական կացարանի հյուսիսային կողմում գտնվող Ղազարապատի շեն-

Բաց Խորան

Սրբոց Հրեշտակապետաց

Վաչե եւ Թամար Մանուկեան Մատենադարան

Տպարան

քը 1960-70-ական թվականներին ծառայել էր որպես ուսանողական հանրակացարան, չնայած չուներ կոմունալ հարմարավետ պայմաններ: 2000 թ. այդ կառույցը նախատեսվեց սարկավագաց դասի համար որպես ննջարանային համալիր եւ վերանորոգվեց: Ննջարանները ապահովվեցին կոմունալ բոլոր հարմարություններով: Այս կառույցի արեւելյան մասում Վազգեն Ա. Կաթողիկոսը կառուցել էր տվել Վանատունը: Այս կառույցը հիմնանորոգման կարիք ուներ, ուստի հիմնովին վերահատակագծվեց եւ վերակառուցվեց: Վանատունը վերածվեց ժամանակի պահանջներին համապատասխանող հյուրատան: Փոխվեցին ինժեներական բոլոր ցանցերը, դռները, պատուհանները: Վանատունը երկրորդ հարկի տաք անցումով կապվեց միաբանական կացարանային շենքին: Իսկ անցումի տակ, բաց կամարով կազմակերպվեց միաբանական կացարաններ տանող արեւելյան մուտքը: Կացարանների մասնաշենքերը Վանատան հետ միասին մեկ կացարանային համալիր են՝ առանձնացված բակով, կազմելով կացարանային գոտին: Մայր Տաճարի կողմից բացվեց դեպի կացարանային գոտի տանող, նախկինում փակված պատմական կամարակապ մուտքը: Այսպիսով, Մայրավանքի հարավային կողմում ձեւավորվեց երկրորդ բակը՝ կացարանային գոտիով: Նախագծի հեղինակն է Ռուբեն Ազատյանը, կոնստրուկտորը՝ Հրանտ Իսագուլյանը:

Շինարարական աշխատանքների փուլում Վեհափառ Հայրապետին օրվա մեջ հաճախ կարելի էր տեսնել շինհրապարակում: Լինելով ուշիմ, կառույցի անհրաժեշտ նորմատիվային պահանջների եւ բոլոր խնդիրների բավարարման համար պահանջկոտ՝ նրա հայացքից չէր վրիպում որեւէ թերություն: Շատ հաճախ Վեհափառ Հայրապետի՝ շինարարական հրապարակ այցելությունների ժամանակ, շենքի ֆունկցիոնալ խնդիրները միաբանների պահանջներին առավել հարմարացնելու նպատակով, նախագծում հենց տեղում կատարվում էին հստակեցումներ եւ ուղղումներ:

Մայրավանքի երկրորդ բակից դուրս տնտեսական բակի առկայությունը եւ համապատասխան շինության կառուցումը անհրաժեշտություն էր. այս խնդիրը եւս լուծում գտավ եւ կառուցվեց երրորդ բակը: Ասել, թե այդ բակերը հնում չէին եղել եւ նոր ստեղծվեցին՝ սխալ է, քանզի մինչ խորհրդային հասարակարգի հաստատումը, Մայր Աթոռն ընդգրկող տարածքները, կառույցներն ու բակերը թվով ավելի շատ են եղել, քան այժմ:

Նույն ժամանակահատվածում սկսվեց Մայր Տաճարի արեւելքում գտնվող տպարանի շենքի վերանորոգման աշխատանքները: 1888 թ. մարտի 28-ին թիվ 132 կոնդակով Մակար Կաթողիկոսը Սինոդին առաջարկել էր տպարանի նոր շենք կառուցելու համար պայմանագիր կնքել ճարտարապետ Մ. Ասլամբեկյանի հետ: Շենքի շինարարությունն սկսվել եւ ավարտվել էր 1889 թ.: 1901-ին տպարանի շինությանը կից, հարավային կողմից կառուցվել էր երկու ընդարձակ կամարակապ դահլիճ եւ մի միջանցք, ուր եւ զետեղել էին տպարանի բոլոր բաժինները: 1960-1962 թթ. տպարանի շենքը վերակառուցվել էր եւ դրա վրա ավելացվել էր երկրորդ հարկաբաժինը: Տպարանի շենքի վերակառուցումից հետո անցել էր գրեթե քառասուն տարի, եւ արդեն 2000 թ. սկզբներին շենքը կանգնել էր ամբողջական հիմնանորոգման խնդրի առջեւ:

Հիշում եմ, երբ 2003-ին ոտք դրեցի տպարանի շենք, առաջին հերթին մտահոգութ-

յուն պատճառեցին տպարանի՝ մինչեւ 4-5 մ բարձրության վրա թրջված պատերը եւ դրանցից արձակվող գարշահոտությունը, սրահների անբարեկարգ եւ անմխիթար վիճակը: Շենքում չէր գործում ջեռուցման համակարգը, կոմունիկացիոն ցանցերի մաշվածության պատճառով չկար ջուր, նորմալ գործող սանհանգույցներ եւ տպարանի աշխատողների համար ցնցուղարաններ:

Վեհափառ Հայրապետը մեծ կարեւորություն էր տալիս տպագրական գործին, ուստի տպարանը հիմնանորոգելու, սարքերը արդիականացնելու խնդիր դրեց: Տպարանի շենքի վերականգնման եւ նորոգության համար առաջին հերթին պատվիրվեց նախագծի մի ողջ փաթեթ, որի մեջ մտնում էին ինժեներական ցանցերի նորոգումը, ջեռուցման, օդափոխության, հիմքերի ջրամեկուսացման գծագրերը:

Տպարանի արեւելյան հատվածի սրահները ազատվեցին տպագրական սարքերից. դրանք տեղափոխեցին միջին սրահ, իսկ ազատված սրահը նախատեսվեց տպագրված նյութերի եւ գրականության համար որպես «Գրատուն»: Տպարանին կից մեկ հարկանի անշուք կառույցը, որը ծառայում էր որպես գրատուն, քանդվեց: 1960-ական թվականներին շենքի առաջին հարկի քարե պատերի վրա իրականացված գաջե սվաղը քանդվեց, պատերի մակերեւույթը հիմնովին մաքրվեց սվաղից, քայքայված կարանները մաքրվեցին եւ կարանախցվեցին, իսկ դատարկ հատվածները լցվեցին շաղախով: Տպարանի շենքի պատմական ներքին տեսքը վերականգնվեց: Վեհափառ Հայրապետը պատվիրեց անգամ հոսանքատար լարերն ու անջատիչները իրականացնել այնպես, ինչպես դրանք եղել էին անցած դարասկզբին: Ստեղծվեց պատմական մի հաճելի միջավայր, որն այցելուին կարծես տեղափոխում էր մեկ այլ դարաշրջան, պատմում շենքի անցյալի ու ներկայի մասին:

Տպարանի շենքի փտած դռներն ու պատուհանները փոխվեցին: Արտաքին հին դռները վերականգնվեցին եւ նորոգվեցին: Տեղադրվեցին մարմարե պատուհանագոգեր: Տպարանի աշխատողների համար կառուցվեցին հանդերձարաններ՝ ցնցուղարաններով եւ սանհանգույցով:

Պատվիրվեցին գունաբաժանող նոր սարքեր եւ թվային այլ համակարգ ունեցող տպագրական մեքենաներ, միաժամանակ նորոգվեցին արժեքավոր եւ պիտանի տպագրական հին սարքերը: Կառույցի պատերը խոնավությունից փրկելու համար առաջին հարկում իրականացվեցին սրահի օդափոխության, հիմքերի ամրացման համակարգեր: Հիմքերի ամրացման աշխատանքների ժամանակ տպարանի շենքի հյուսիս-արեւմտյան անկյունում, հիմնապատի մեջ բացված որմի վրա երեւաց Մակար Կաթողիկոսի թողած՝ տպարանի շենքի կառուցմանը նվիրված արձանագիր քարը: Ճարտարապետները առաջարկեցին քարը պատի հիմնային մասից հանել եւ ավելի բարձր հատվածում տեղադրել: Վեհափառ Հայրապետը նպատակահարմար գտավ այն թողնել իր տեղում, քանի որ այդպես էր կամեցել Մակար Կաթողիկոսը, սակայն առաջարկեց փոսորակը չլցնել, այլ այն առնել ապակեպատ ծածկույթի տակ՝ արձանագիր քարը մատչելի եւ տեսանելի դարձնելու համար:

Տպարանի երկրորդ հարկի փայտե փտած հատակները (իրականցվել էին 1962-ին)

քանդվեցին եւ փոխարինվեցին նորերով: Շենքի ներսում փակված նկուղ տանող ասպիճաններն իրենց մուտքային մասով բացվեցին:

Փայտե փտած հատակների տակ, առաջին հարկի թաղերի վրա լցված էր շինարարական աղբ: Թաղերի վրայից շինարարական աղբը հանվեց, լցվեց թեթեւ խարամով ու համապատասխան ծածկույթներով ամբողջացվեց: Ամբողջ երկրորդ հարկաբաժինը նախատեսվեց եւ բաժանվեց՝ Հրատարակչական, Դաշտոնական մասուլի, տպարանի ադմինիստրատիվ բաժինների միջեւ առանձին-առնաձին հատվածներով:

Իհարկե, տպարանի շենքը առանձին կանգնած պատմական կառույց է, որը գոտեւորման նախագծում ոչ մի կառույցի տարածքի մեջ չմիավորվեց, սակայն կրթական գոտին, որն ընկած է տպարանից դեպի արեւելք, միավորեց մի քանի կառույցներ:

Կրթական մասին հատկացված տարածքը՝ Գեւորգյան ճեմարանով, հանրակացարանային շենքով (կառուցվել է Գարեգին Ա. Կաթողիկոսի օրոք) միավորվեցին կրթական մասին հատկացված տարածքի՝ կրթական գոտու մեջ: Այս գոտում աշխատանքներն սկսվեցին Գեւորգյան ճեմարանի վերանորոգումից: Ուսուցման համար անհրաժեշտ էր ապահովել առավել հարմարավետ եւ ժամանակակից պայմաններ: Սկսվեց շենքի հիմնանորոգման աշխատանքները, իրականացվեց ինժեներական նոր ցանցեր՝ ջուր, կոյուղի, ջեռուցում, էլեկտրականություն, ինտերնետ կապ եւ այլն: Մարմարապատվեց հատակը, եւ ցինկապատ ողջ թիթեղածածկը փոխարինվեց պղնձե թիթեղածածկով:

Կրթական գոտում նախատեսվեց եւ տեղադրվեց «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարան-գրադարանը. այն միաժամանակ ասպվածաբանական կենտրոն է, որը նախագծում լրացնում է կրթական գոտու կառույցների ցանկը: Կառույցի նախագծի հեղինակն է Արտակ Ղուլյանը: Մատենադարան-գրադարանը հատակագծում արեւելքից-արեւմուտք ձգված, սյունազարդ կամարասրահով դեպի ճեմարան նայող երկհարկանի շինություն է՝ կառուցված բաց գույնի ֆելզիտ քարով: Գրադարանի շենքը կանգնեցվեց նախկինում կառուցված եւ անավարտ թողնված ասպղադիտարանի տեղում: Ասպղադիտարանի շենքը մի քանի տասնամյակ անավարտ էր մնացել, եւ արդեն 1970- ական թվականներին փորձ արվեց երկաթ-բետոնե կոնստրուկցիաներով ուժեղացնելու այն: Իրագործված միջոցառումները մինչեւ վերջ չհասցվեցին, եւ արդեն Ի. դարի վերջերին (հավանաբար սխալ ուժեղացման արդյունքում) սկսվեց շինության արտաքին պատերի քայքայումը: Շենքի վրա եղած կոնստրուկտիվ վնասվածքներն այնքան մեծ էին, որ անհնարին եղավ այն պահպանել: Վեհափառ Հայրապետը կառույցը պահպանելու համար մասնագիտական մի քանի հանձնաժողովներ էր հրավիրել, որոնց տված բացասական եզրակացության հիման վրա որոշվեց տեղում կառուցել գրադարան-մատենադարանի շենքը:

Վերջին տասնամյակում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրադարանի գրքերի քանակը ավելացել էր մեկ տասնյակ հազարով, բացի այդ, հին գրադարանը, որը գտնվում էր Գանձատան շենքում, զրկված էր հնատիպ եւ ոչ հնատիպ գրքերի պահպանման համար անհրաժեշտ օդափոխության, հրդեհապաշտպան եւ նմանատիպ այլ համակարգերից:

Վաչե եւ Թամար Մանուկյան մատենադարան-գրադարանն ունի ուղղանկյուն հա-

փակագիծ, ձգված միջանցքի երկու կողմերում տեղավորված են մատենադարանի բաժինները՝ արեւելյան կողմում հարմարավետ ընթերցասրահներով, համապատասխան լուսավոր լսարաններով: Շենքի ճակատները մշակված են կամարների եւ կամարախորշերի ռիթմիկ շարքով, որոնց հանգուցային հատվածները շեշտված են պլաստիկ մշակումներով: Կամարակապի ամբողջ երկարությամբ ընդգծված սրահը նայում է ճեմարանի շենքին: Շենքի հարավային կողմում տեղադրվեց եւս մեկ մուտք՝ բաց գույնի ֆելզիտե քարերով իրականացված: Հարավային մուտքը տեղադրված է դեպի Վեհարան եւ տնտեսական գոտի տանող ճանապարհի վրա՝ տրանսպորտային միջոցների համար: Այսպիսով, կրթական գոտին ներառեց ճեմարանի հին շենքը, նոր մասնաշենքը, ճեմարանի ուսանողների համար նախատեսված հանրակացարանային եւ գրադարան – մատենադարանի շենքերը: Վերը նշված գոտին հիմնովին բարեկարգվեց, բարեզարդվեց եւ կանաչապատվեց: Բարեկարգումն իրականացվեց դեպի գրադարան տանող անցուղիներով:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, կառուցված լինելով Գեւորգ Դ. Կաթողիկոսի օրոք, չուներ սպորտային դահլիճ, որն անհրաժեշտ էր երիտասարդ հոգեւորականների ֆիզիկական կրթության համար: Ուստի, ճեմարանի հարակից տարածքում՝ հյուսիս-արեւելյան մասում, կառուցվեցին սպորտային եւ հանդիսությունների համար նախատեսված դահլիճները (նախագծի հեղինակ՝ Ջիմ Թորոսյան): Այսպիսով, նորակառույց հատվածը լրացնում եւ փակում էր բակը փողոցի կողմից: Կառույցը ճեմարանի հյուսիս-արեւելյան թեւը եւ միաժամանակ վանքի արեւելյան պարսպապատն է, որն ավարտվում է հուշերի եւ մեծարման հավաքատեղիով, խաչքարերով լուծված մի հուշապատով՝ նվիրված սպալինյան բռնության տարիներին զոհված հոգեւորականների հիշատակին:

Հաշվի առնելով կաթողիկոսներից շատերի ավանդը հոգեւոր գաղափարախոսության մեջ, ինչպես նաեւ հայ ժողովդի կյանքում ունեցած նրանց մեծ դերակատարությունը՝ որոշվեց ճեմարանի ներսում տեղադրել կաթողիկոսների կիսանդրիները: Այսպիսով, ճեմարանը նորոգվեց եւ ունեցավ իր առանձին բակը, որի հյուսիսային կողմում տեղադրվեց Հրեշտակապետաց նորակառույց մատուռ-եկեղեցին (ճարտարապետ՝ Ջիմ Թորոսյան): Մատուռի կառուցումն ի սկզբանե նախատեսված էր իրականացնել Երեւանի քաղաքապետարանի դիմացի եռանկյունաձեւ հողատարածքի վրա: Այդպես այն կդառնար հրապարակի գերիշխող՝ դոմինանտ կառույցը: Սակայն այդ տեղանքում եկեղեցու կառուցումը ինչ-ինչ պատճառներով չհաստատվեց: Մատուռ-եկեղեցու կառուցման համար որպես առավել հարմար տարածք ընտրվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճեմարանի բակը: Այն նախագծվեց ճեմարանի հարակից տեղանքի վրա եւ իրականացվեց որպես դամբարանային կառույց, որի վերին հարկը եկեղեցի է:

Նմանատիպ դամբարան-եկեղեցու կառուցմամբ պահպանվել են ավանդական դամբարան-եկեղեցիների կառուցման սկզբունքները, սակայն այն հարմարեցված է նաեւ ժամանակակից պահանջներին եւ խնդիրներին: Ավանդական դամբարանները եռահարկ կառույցներ են, որտեղ եկեղեցին տեղադրված է երկրորդ հարկում, իսկ դամբարանային հատվածը կիսով չափ գտնվում է գետնի մեջ: Որպես երրորդ հարկ դիտվում է

եկեղեցու բաց սյունասրահ-ռոտոնդան, որը փոխարինում է եկեղեցու թմբուկին: Նորակառույց դամբարան-եկեղեցին հատակագծում արտաքինից բազմանիստ է: Նկուղային հարկը նախատեսված է որպես դամբարանային կառույց, ուր հետագայում կամփոփվեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարների աճյունները: Եկեղեցու արտաքին պատի նիստերը խորշեր են, որոնք խուլ պատերով բարձրանում են վեր: Դամբարան-եկեղեցին հիշեցնում է Անի քաղաքի Փրկչի բոլորակ եկեղեցին: Այն տեղադրվել է Մայրավանքի հյուսիսում գտնվող այգու անցուղու առանցքով:

Եկեղեցին վերին մասում, տրոմպային անցումով դառնում է որմնակամարներ եւ ճակտոններ՝ ստեղծելով մի քիվ-գոտի, որից հետո սկսվում են խաչապատկեր բացվածքները, որոնցով կազմվում է եկեղեցու թմբուկը: Կառույցն ավարտվում է հովհարաձեւ վեղարով եւ աշխարհի չորս կողմերը նայող քարե խաչով: Ճարտարապետական մտահղացումը քանդակային բոլորակ մի ծավալ է, որը նաեւ կրկնում է հայ ճարտարապետական մոնումենտալ եռահարկ եկեղեցու առանձնահատկությունները: Այժմ եկեղեցին հիմնականում ծառայում է ճեմարանի ուսանողների հոգեւոր կարիքների համար: Այսպիսով, Հրեշտակապետաց եկեղեցին եւ Վազգենյան մուտքը միասին կազմում են Մայրավանքի հյուսիսային ճակատի մի հատվածը: Վերջիններս ձեւավորում են Էջմիածին քաղաքի գլխավոր հրապարակի հարավային հատվածը:

Այժմ Հրեշտակապետաց եկեղեցին իր բարձրությամբ եւ ծավալատարածական, քարի գունային լուծմամբ միաժամանակ Էջմիածին քաղաքի գլխավոր հրապարակի գերիշխող կառույցն է:

Ճեմարանի բակում արեւմտյան կողմից, դեպի Ս. Գայանե վանք տանող ճանապարհի եզրին տեղադրվեցին նորակերտ խաչքարեր: Դրթական գոտին հիմնովին բարեկարգվեց, բարեզարդվեց եւ կանաչապատվեց՝ ընդգրկելով նորակառույց արեւելյան մուտքը, Բաց խորանը եւ գրադարան-մատենադարանը: Բարեկարգումն իրականացվեց դեպի գրադարան տանող անցուղիներով, ճեմարանի բակից մինչեւ միաբանական գերեզմանատուն տարածքի բարեկարգումը կատարվեց գազոններով եւ ցածր թփերով, որպեսզի դեպի Ս. Գայանե վանք եւ Արարատ լեռ բացվող հիասքանչ համայնապատկերը չփակվի: Այսպիսին էին Վեհափառ Հայրապետի՝ այս հատվածին վերաբերող բոլոր ծրագրերը, որոնք իրականություն դարձան: